ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Արտավազդ Մկրտչյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հալիձորի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Գայանե Շալունց

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն..... 3

2.Գլուխ1.Սովորողների իրավունք ու ազատություն, պատիվ ու արժանապատվություն հասկացությունները 5

3.Գլուխ2.Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում.....8

4.Դասի պլանի նմուշ օրինակ.....11

5.Եզրակացություն.....15

6.Օգտագործված գրականության ցանկ..... 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմություն առարկայի դասավանդման գլխավոր նպատակը ազգային գիտակցությամբ օժտված, համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից հայ մարդու և քաղաքացու ձևավորումն է: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ.

1. Սովորողներին զինել հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելի պես պետք է անցնեն ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը:
2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:

Երեխաները, սկսած տարբեր ժամանակներից, միշտ եղել են հասարակության ամենաանպաշտպան սոցիալական խավը: Յուրաքանչյուր երեխա, լինելով իր երկրի վաղվա ապագան, նախ և առաջ պետք է զգա, որ պաշտպանված են իր բոլոր իրավունքները,որպեսզի իրեն հասարակությունից կտրված և օտարված չզգա: Երեխաների իրավունքների մասին բազմաթիվ եվրոպական հռչակագրեր հիմք հադիսացան, որ ընտանիքում և հասարակության մեջ փոխվի երեխայի կարգավիճակը:

Յուրաքանչյուր երեխա ծնված օրվանից ունի բազմապիսի իրավունքներ, որոնք անօտարելի և անքակտելի են, որոնց հիմքում ընկած է անձի իրավագիտակցության բարձրացումն ու վեհ արժեքների սերմանումը:

Յուրաքանչյուր առարկայի այդ թվում պատմություն առարկայի դասավանդման ընթացքում կրթության հիմքում ընկած է լավ և իրավագիտակից քաղաքացի ձևավորելու խնդիրը: Յուրաքանչյուր երեխա ունենալով կրթություն ստանալու իրավունք, կրթություն ստանալու ժամանակահատվածում պետք է

լիարժեք իմանա իր իրավունքների ու ազատությունների, պատվի և արժանապատվության մասին հիմնավոր պատկերացումներ: Իրավունքը բացի նրանից, որ համարվում է հիմնարար արժեք, նաև փիլիսոփայական և բարոյագիտական հասկացություն է: Հետազոտական աշխատանքի թեման, կարելի է ասել, ժամանակին համահունչ, կարևոր և հաճախակի արծարծվող թեմաներից է, քանի որ խոսվում է սովորողի իրավունքների կարևորագույն արժեքների մասին:

Հետազոտության *թեմայի արդիականությունը* ինքնին կայանում է նրանում, որ ցանկացած երեխա նախ և առաջ պետք է իմանա իր բոլոր իրավունքների պաշտպանության մասին, որը նաև իրականացվում է պատմություն առարկայի միջոցով:

Հետազոտության *նպատակն է՝* ուսումնասիրել սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության *խնդիրներն են՝*

- ուսումնասիրել և արժևորել պատիվ ու արժանապատվություն հասկացությունները, սովորողների իրավունքների ու ազատություններիպաշտպանությունը պատմություն առարկայի դասավանդման ընթացքում:
- ամփոփել արդյունքները և կատարել եզրահանգումներ:

Աշխատանքի *օբյեկտն ու առարկան:* Հետազոտական աշխատանքի օբյեկտը պատմության դասավանդումն է, իսկ առարկան՝դասավանդման ընթացքում սովորողի վերը նշված իրավունքները:

Աշխատանքի *մեթոդական հիմքեր:* Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել զրույցը և քննարկման մեթոդները:

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԻՎ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխարհում ցանկացած ժողովրդավարական պետություն, որոնց մեջ բացառություն չէ Հայաստանի Հանրապետությունը, առաջնահերթություն է երեխաների իրավունքների պաշտպանությունը: Ծնված օրվանից յուրաքանչյուր երեխա ունի իր անօտարելի և անքակտելի իրավունքները, որոնք ամրագրված են ՀՀ սահմանադրության մեջ:

Դպրոցում երեխայի դաստիարակության մեջ կարևոր է այն, թե ինչ բարոյական հատկանիշներով է դաստիարակվում երեխան, ինչ արժեքներ է իր մեջ կրում, և թե արդյո՞ք իր արժեքային նկարագրով ազգին պիտանի մարդ կլինի նա ապագայում: Այս ամենին հասնելու համար, նախ և առաջ երեխան ինքը պետք է տեսնի, որ իր բոլոր իրավունքները հստակորեն պահպանվում են և, կարելի է ասել, չի ոտնահարվում ոչ մեկի կողմից: Բարությամբ, արդարությամբ, հայրենասիրությամբ և այլ կարևոր բարոյական արժեքների նկատմամբ մարդու վերաբերմունքով է պայմանավորված յուրաքանչյուր անհատի հասարակության մեջ կենսագործունեությունը:

Երեխայի ծնվելու օրվանից սկսված նրանցից յուրաքանչյուրի մեջ սկսվում է ձևավորվել բարոյական արժեքները, որը շարունակվում է մանկապարտեզում, դպրոցում, և իր ամբողջ կյանքի ընթացքում:Փաստորեն, վստահորեն կարող ենք ասել, որ երեխայի զարգացման գործում իրենց մեծ ավանդն ու դերն ունեն, սոցիալական միջավայրը, դպրոցը, մանկապարտեզը, ընտանիքը: Այս ամենի շարքում սակայն հանուն արդարության պետք է առանձնացնել դպրոցի տեղը, որովհետև դպրոցն է այն կարևորագույն օղակը, որի շնորհիվ յուրաքանչյուր երեխա սովորում և տիրապետում է իր բոլոր իրավունքներին և պարտականությունների, ազգին ու պետությանը պիտանի քաղաքացի դառնում:

ՀՀ ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները:

Սովորողն իրավունք ունի.

1. Ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն:
2. Ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ:
3. Անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից:
4. Մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին
5. Պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունց, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը:
6. Ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները:
7. Օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Սովորողը պարտավոր է.

1. Կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները:
2. Ստանալ հանրակրթության պետական չափորոշչիներին համապատասխան հմտություններ և կարողություններ, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները:
3. Հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին
4. Կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Հանրակրթության մասին օրենքի 27-րդ հոդվածի մեջ նշվում է առ այն, որ մանկավարժական աշխատողը նախ և առաջ պարտավոր է.

1. Հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները,պատիվն ու արժանապատվությունը:
2. Նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելովյուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները:
3. Սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ, դաստիարակել հայրենասիրություն:

ԳԼՈՒԽ2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ճիշտ է ասված, որ պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Գալով հազարամյակների խորքից՝հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն:Այն հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Աշակերտների մեջ հայրենասիրությունն ավելի ամրապնդելու և այդ բառն ավելի արժևորելու համար յուրաքանչյուր դասի մեկնարկը տրվում է տարբեր հայրենասիրական երգեր երգելով: Այդ երգերի մեջ արծարծելով պատվի, արժանապատվության, իրավունքի ու ազատության մասին տողեր, երեխաների մեջ սերմանում ենք ավելի մեծ արժեհամակարգ, որի արդյունքում կունենանք ավելի արժանապատիվ և հայրենասեր քաղաքացի:

Մարդու վարքը, գործունեությունն ու կեցությունն ընդհանրապես մեծապես պայմանավորված են նրա նախընտրած արժեքներով, արժեքային կողմնորոշմամբ: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեհամակարգի նշանակալի մասը:Պատմություն առարկան թերևս այն առարկաների շարքին է դասվում, որի ընթացքում, տարբեր ժամանակշրջաններ ուսումնասիրելու ժամանակ անընդհատ կարող ես հանդիպել և խաչվել այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են պատիվն ու արժանապատվությունը, իրավունքն ու ազատությունը: Քիչ չեն պատմության ընթացքում այնպիսի երևելի կերպարներ ու

անհատականություններ,ովքեր այս բոլոր կարևորագույն արժեքների համար մղել են հերոսական գոյապայքար: Մասնավորապես հայոց պատմություն առարկան ուսումնասիրելիս՝ սկսած հայ ժողովրդի կազմավորումից, անընդհատ, ամեն մի շրջափուլում ակնհայտորեն երևում է հերոսական հայի պայքարը հանուն իր պատվի ու արժանապատվության և հանուն ազատ ու անկախ երկրում ապրելու ու արարելու:

Սկսած միջին դասարաններից, հայոց պատմություն առարկան ուսումնասիրելու ժամանակ, յուրաքանչյուր երեխայի մոտ ձևավորվում է այդ բոլոր վեհ արժեքները պաշտպանելու և դրանց համար պայքարելու մեծ ոգի: Այս բոլոր վերը թվարկված իրավունք-արժեքները այն անկյունաքարային կետերն են, որոնց համար հայ ժողովուրդը դարեր շարունակ մաքառել է բազմաթիվ նվաճողների դեմ, հանուն իր իրավունքների պաշտպանության:

Պատմությունը թույլ է տալիս երեխային ընկղմվելու և հասկանալու, թե ի՞նչ նշանակություն են ունեցել Ավարայրի ճակատամարտը, Արցախյան բոլոր պատերազմները, ՀՀ անկախության հռչակագրերը: Ուսումնասիրելով այս և մնացած այլ կարևոր թեմաներ՝ աշակերտը տեսնում է, որ այս ամենը գոյության կռիվ էր, պայքար էր՝ հանուն անկախության, հանուն պատվի ու արժանապատվության: Առարկայի շնորհիվ սովորողը արժևորում է բարձր, հիմնարար արժեքների նշանակությունը, քանի որ այդ ամենի մեջ է տեսնում պետությունը և արժանապատիվ քաղաքացուն:

Մեր պատմության ընթացքում քիչ չեն եղել դրվագներ, երբ ընկել ենք օտարի տիրապետության տակ, կորցրել մեր իրավունքներն ու ազատությունը, սակայն պատվի և արժանապավության վեհ գաղափարներով լեցուն հայ ժողովուրդը կարողացել է պահպանել իր ինքնությունը, ցույց տալ, որ հայը ծնվել է ազատ ու անկախ ապրելու համար:

Պակաս չեն այն վառ օրինակները, որոնք ցույց են տալիս հայի անկոտրուն ոգին ու պայքարը՝ հանուն պատվի ու արժանապատվության: Օրինակներից կարող ենք հիշել Արտավազդ II-րդ թագավորին, ում Անտոնիոսը ամեն կերպ հավաստում էր, որ եթե ինքն ու ընտանիքը խոնրահվեն Եգիպտոսի թագուհու առաջ և ներում

խնդրեն, վերջիններս պատրաստ են նրանց ազատություն շնորհել:Ինչպես վկայում են ժամանակաշրջանի աղբյուրները, Արտավազդ թագավորն ու իր ընտանիքը չեն խոնարհվում, բարձր են պահում իրենց արժանապատվությունը, որից հետո Արտավազդ թագավորը մահապատժի է ենթարկվում:

Չենք կարող չհիշել Արցախյան ապրիլյան պատերազմի նահատակ, հերոս Ռոբերտ Աբաջյանի վառ օրինակը, ով նռնակով պայթեցրեց իրեն, անմահացավ՝գերի չընկնելով թուրքերին, որտեղ նույնպես երևում է պատվի ու արժանապատվության վառ դրսևորում: Այս և շատ ու շատ նմանօրինակ դրվագները հայոց պատմության մեջ վկայում են հայ ժողովորդի պատվի, արժանապատվության և մի շարք այլ հիմնարար արժեքների մասին,որոնք հայ ժողովորդի պատմության անբաժան մասն են կազմում:

Հումանիտար առարկաները բացառիկ մեծ ներուժ ունեն արժանապատվության մասին պատկերացումներ ձևավորելու համար, քանի որ պարունակում են մարդկության կուտակած բազմադարյան փորձի բարոյական վերլուծություն

Պատմություն առարկան ուսումնասիրելու ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են մի շարք կարևորագույն արժեքներ, որոնք այն գլխավոր հենասյուներն են, որոնց շնորհիվ հազարամյակների միջով անցնելով, հաղրթահարելով շատ դժվարություններ, պահպանել ենք մեր մշակույթն ու ինքնությունը:

Արդյունքում՝

1. Ապրել ազատ ու անկախ երկրում
2. Պայքարել արժանապատվության ու պատվի համար
3. Պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները
4. Արժևորել հայ ժողովրդի անցած ուղին

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության հիմնադրումը և բարեփոխումները:

Առարկա	Հայոց պատմություն
Դասարան	7-րդ
Թեմա	Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության հիմնադրումը:
Նպատակ	Ձևավորել Արտաշեսյան թագավորության հիմնադրման մասին գիտելիքներ: Ձևավորել հայկական աշխարհակալության ստեղծման, հզորացման գործընթացում ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը վերլուծելու հմտություններ Զարգացնել Արտաշես 1-ինի ձեռքբերումները վերլուծելու դատողություն: Սերմանել Արտաշես Ա-ի հայրենապաշտ գործունեությունը արժևորելու կարողություններ: Օգտվելով Աշխարհացույց հարթակից երեխաների մոտ զարգացնել սովորել սովորեցնելու,լեզվական, և մշակութային կարողունակություններ,ՏՀՏ-ն դասերի ընթացքում կիառելու հմտություններ:
Ակնկալվող վերջնարդյունքներ	Ներկայացնի Արտաշես թագավորի գործունեության առանցքային դրվագները: Մեկնաբանի Արտաշես առաջինի հողերի

	միավորման կարևորությունը, կապելով իրավունք, պատիվ, ազատություն, արժանապատվություն հասկացությունների հետ: Գնահատի Արտաշես թագավորի դերը հայոց պատմության մեջ, հասկանա ազատության և իրավունքի դերը: Վերլուծի Արտաշեսյան թագավորության հիմնադրման նախադրյալները, անի եզրահանգումներ
Կապը ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների հետ:	Հ1-Վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը: Հ31-Արտահայտի, հիմնավորի և պաշտպանի սեփական տեսակետը և դիրքորոշումը: Հ38-Ներկայացնի երեխայի, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, բացատրի, թե ինչ դեր ունեն անհատը և պետությունը դրանք հարգելու և պաշտպանելու գործում: Հ39-բացատրի քաղաքացիության, իրավունքի ու պարտականության էությունը և ժողովրդավարության նշանակությունը սոցիալական արդար և ներդաշնակ համակեցության ապահովման գործում: Հ25-Գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և

	կայացնի որոշումներ
Խաչվող հասկացություններ	Պատճառ և հետևանք Անհատներ և հարաբերություններ, բարեփոխումներ, հասարակություն, իրավունքներ,արժանապատվություն
Միջառարկայական կապեր	Համաշխարհային պատմություն-Սելևկյան տերություն, Հռոմ, Հաննիբալ, մագնեսիայի ճակատամարտ: Աշխարհագրություն-Աշխատանք քարտեզի հետ Հասարակագիտություն-մարդ-հասարակական հարաբերություններ, պետություն Հայոց լեզու-բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում:
Անհրաժեշտ պարագաներ	Ուսումնական նյութ, համակարգիչ, պրոյեկտոր, քարտեզ:
Դասի ընթացքը	Խթանում-Հարց ու պատասխան՝ ներառելով նախորդ թեմայի նոր թեմային առնչվող իրադարձությունները: Ներկայացնել նոր թեման և այնուհետև ամրապնդել խմբային աշխատանքով: Կազմակերպել հետադարձ կապ Ֆրայերի մոդելով:
Մեթոդներ և հնարներ	Հարց ու պատասխան, զրույց
Գնահատում	Փոխադարձ գնահատում ըստ խմբերի:

«Արտաշեսյան թագավորության հիմնադրումը և բարեփոխումները »դասը իր մեջ պարունակում է բազմաթիվ իրավունքների, արժանապատվության, պատվի մասին դրվագներ: Արտաշեսյան թագավորության հիմնադիր Արտաշես առաջինը բազմելով հայոց գահին սկսեց միավորել բոլոր, այն հայկական հողերը, որոնք նվաճվել էին հարևան պետությունների կողմից: Այստեղ բախվում են պատիվն ու արժանապատվությունը, հանուն որի հայոց թագավորը սկսեց վերականգնել հայկական տարածքների ամբողջականությունը:

Արտաշես 1-ի կարևոր բարեփոխումներից էր հողային բարեփոխումը: Նրա օրոք խիստ սրվել էին հողի մասնավոր սեփականատերերի և գյուղական համայնականների միջև հակասությունները:Ագարակատերերը անարգել զավթում էին համայնական հողերն ու գյուղացիներին զրկում իրենց գոյությունը պահպանելու միակ միջոցից:Համայնական հողերի անզուսպ յուրացումը տեղիք էր տալիս զինված ընդհարումների, որը բնականաբար չէր բխում երկրի շահերից, քանի որ դրանով ոտնահարվում էր հասարակ գյուղացիների իրավունքները, որոնք հանդիսանում էին պետության՝ թիվ մեկ հարկատուն, և զորք տրամադրողը:

Արտաշեսը հրապարակում է հրամանագիր հողային բարեփոխման վերաբերյալ, որի համաձայն՝մասնավոր հողային տնտեսությունների և համայնքային հողատարածքների սահմանին տեղադրվեցին սահմանաքարեր, որի արդյունքում պաշտպանվեց գյուղացիների հողային իրավունքները:

Այս դասը ուսուցողական է, քանի որ աշակերտներին սովորեցնում է պաշտպանել մարդկանց ոտնահարված իրավունքները, պատվով և արժանապատվությամբ պաշտպանել և տեր կանգնել երկրի տարածքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը «Պատմություն» առարկայի դասավանդման ընթացքում և գործնականում կիրառելով այն, եկանք այն եզրակացությանը, որ ուսումնառության ընթացքում, հայագիտական, հասարակագիտական առարկաների շրջանակում ամրապնդվում են սովորողների իրավունքներն ու ազատությունները, արմատավորվում պատիվն ու արժանապատվությունը :

Արդյունավետ ուսուցում ապահովելու համար առաջնային է սովորողի այդ բոլոր իրավունքների պաշտպանության և պարտականությունների կատարումը:Բոլոր աշակերտները՝ անկախ մտավոր, ֆիզիկական, հոգեկան առանձնահատկություններից, պետք է կարողանան պաշտպանել իրենցիրավունքներն ու ազատությունները, բայց և միաժամանակ չմոռանան, դիմացինի իրավունքների մասին: Օրենքները չիմանալը չի ազատում պատասխանատվությունից, ուստի անհրաժեշտ է աշակերտներին դեռ մանկուց իրազեկել հասարակական կարգ ու կանոնի, օրենքի, իրավունքի ու պարտականության և հավասարության կարևորության մասին:

Յուրաքանչյուր աշակերտ՝ լավ տիրապետելով իր իրավունքներին, կարող է ուսուցման մեջ ապահովել հաջողություններ: Դասապրոցեսում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ սովորողը հաճույքով հաճախի դպրոց և, որ ամենակարևորն է, զգա, որ իր իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը պաշտպանված են: Այդ ամենին հետևողն ու հիմնական նպաստողը ուսուցիչն է, ում ուսերին ընկած է մեծ պատասխանատվություն: Պատմություն առարկայի դասավանդման ընթացքում նյութի մատուցումը պետք է լինի ճկուն, հետաքրքիր և հետապնդի սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությանը: Այս ամենի ճիշտ կիրառումը հնարավորություն է տալիս սովորողին հասնել որոշակի հաջողության և, որ ամենակարևորն է, կարողանա հաղթահարել դժվարություններն ու խոչընդոտները:

Ժամանակակից հասարակության մեջ երեխաները թե՛ ընտանիքում, թե՛ դպրոցում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ կրթություն և դաստիարակություն:Երեխաները, որպես ներկայի կերտողներ և ապագայի շարունակողներ, միշտ էլ գտնվել ենու գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում: Ուստի պատահական չէ, որ արդի պայմաններում ստեղծվում են նոր մեթոդներ, ուսուցման նորանոր տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս երեխաներին զարգանալ ներդաշնակ բազմակողմանի, որի հիմքում ընկած է իրավունքների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ երեխայի մասին իրավունքի մասին, հոդված 11։
2. ՀՀ հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդված։
3. ՀՀ հանրակրթության մասին 27-րդ հոդված։
4. Միքայելյան Հ.Ս, Ենոքյան Ա.Վ-Բարոյական արժեքների ձևավորումը հումանիտար կրթության պայմաններում։